ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՌՈՔՆԻ ՖԱՐԻԲԱ

ԿԱՆԱՆՑ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՐՍԻՑ ԾՈՑԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄ ԱՐԱԲԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Է.00.02 «Համաշխարհային պատմություն, միջազգային հարաբերություններ» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ 2018

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում

Գիտական ղեկավար՝ պ. գ.դ., պրոֆեսոր
Արշակ Փոլադյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ պ.գ.դ., պրոֆեսոր Վ. Ա. Բայբուրդյան
պ.գ.թ., դոցենտ Ա. Ա. Փաշայան

Առաջատար կազմակերպություն՝ Հայ-ռուսական (սլավոնական) համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2018 թ. մարտի 26 -ին, ժամը 13:00-ին ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտում գործող ՀՀ ԲՈՀ-ի 006 «Համաշխարհային պատմություն, միջազգային հարաբերություններ» մասնագիտական խորհրդի նիստում (հասցե՝ 0019, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան 24/4):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2018 թ. փետրվարի 23-ին:

Մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար՝ պ.գ.թ. Գ.Ա. Մարգարյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը: Պարսից Ծոցի համագործակցության խորհրդի անդամ երկրների զարգացման գործում կանանց դերի, մասնակցության համակողմանի և մանրակրկիտ ուսումնասիրությունն ունի ինչպես գիտական արդիականություն, այնպես էլ քաղաքական կարևորություն:

Ուսումնասիրվող ժամանակշրջանում ՊԾԱԵՀԽ-ի թե՛ քաղաքական և թե՛ տնտեսական զարգացմանն առնչվող խնդիրների ուսումնասիրությունը պայմանավորված է այդ երկրների առաջընթացին կանանց անմիջական մասնակցությամբ և այն պայմանավորող գործոնների բազմակողմանի վերլուծության անհրաժեշտությամբ:

Ծոցի համագործակցության խորհրդի անդամ երկրները, տևականորեն գտնվելով օտար տիրապետության տակ և զրկված լինելով սեփական ճակատագիրը տնօրինելու հնարավորությունից, ետ էին մնացել պատմական զարգացման ընթացքից:

Անկախություն ձեռք բերելուց և իրենց ազգային պետությունները ստեղծելուց հետո այդ երկրների իշխանությունների առաջնահերթ և գերակա խնդիրը դարձավ երկրների համար զարգացման հնարավորության ապահովումը: Այդ երկրների իշխանությունների քաղաքականության վրա իր անմիջական ազդեցությունն ունեցավ նաև Արևմուտքում նոր գաղափարների (մոդեռնիզմ, ֆեմինիզմ, գլոբալացում և այլն) ձևավորումը և նրանց մուտքը Ծոցի արաբական երկրներ:

Չնայած որոշակի ձեռքբերումներին, այսուհանդերձ, այս երկրները այսօր էլ կանգնած են իրենց առաջընթացը կաշկանդող ամենատարբեր, բազմաբնույթ խոչընդոտների դեմ, որոնցից է նաև այդ երկրներում կանանց վիճակը և, մասնավորաբար, նրանց ոչ լիարժեք մասնակցությունը այդ երկրների զարգացման գործընթացում:

Կանանց իրավունքների պաշտպանությունը զուտ գենդերային կամ բարոյական խնդիր չէ, այլ առավելապես քաղաքական և ռազմավարական, քանի որ երկրների կյանքի տարբեր բնագավառներում կանանց լայն ընդգրկումը և նրանց ֆիզիկական, հոգևոր և մտավոր ունակությունների օգտագործումը մեծ չափով կնպաստի այդ երկրների զարգացմանն ու առաջադիմությանը: Հետևաբար, կանանց իրավունքների հետ առնչվող խնդիրների ուսումնասիրությունն անժխտելիորեն կարևոր նշանակություն ունի երկրների և տարածաշրջանների տնտեսական, քաղաքական, մշակութային զարգացման մակարդակի որոշման, այդ մակարդակը պայմանավորող գործոնների ճշգրտման ու հստակեցման, ինչպես նաև նրանց զարգացման հետագա ընթացքի և հեռանկարների կանխատեսման համար:

Կանանց իրավունքների, երկրների զարգացման գործում նրանց լայն մասնակցության անհրաժեշտության և հնարավորությունների փիլիսոփայական հիմքերը, այդ երկրների ղեկավար շրջանների քաղաքականության ուղղվածության և ձեռնարկած միջոցառումների ուսումնասիրությունը հնարավոր է դարձնում դրանք սահմանափակող հիմնական գործոնների, ինչպես նաև նրանց հաղթահարման միջոցների բացահայտումը:

Կանանց հիմնախնդրի ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս ավելի հստակ ընկալել և պատկերացնել սեփական պետություններ ստեղծելուց հետո ՊԾԱԵԽ երկրների հասարակական-քաղաքական զարգացումներն ու դրանց ուղղվածությունը, այդ զարգացումներում կանանց մասնակցությունը, ինչը ոչ միայն մեծ չափով կնպաստի այդ երկրների տնտեսական, քաղաքական և մշակութային զարգացմանը, կխթանի այդ զարգացման տեմպերը, այլև դրանով իսկ կամրապնդի այդ պետություններին, կդյուրացնի նրանց զարգացումը սահմանափակող դժվարությունների հաղթահարումը և համաշխարհային գործընթացներին նրանց ակտիվ մասնակցությունը: Այն, միաժամանակ, մեծ չափով կնպաստի երկրների ազգային, նաև տարածաշրջանային անվտանգության պահպանմանը:

Աշխատանքի խնդիրներն ու նպատակները: Ատենախոսության թեման ընտրվել է՝ ելնելով անկախության ձեռքբերումից հետո Պարսից ծոցի համագործակցության խորհրդի երկրներում կանանց կարգավիճակի լուսաբանման անհրաժեշտությունից, որին հասնելու համար հեղինակն իր առջև դրել է հետևյալ խնդիրները:

- Ներկայացնել և քննարկել այդ երկրներում կանանց կարգավիճակը և այն պայմանավորող ներքին և արտաքին հիմնական գործոնները:
- Բացահայտել այդ երկրներում կանանց իրավունքների սահմանափակության և զարգացման գործընթացում նրանց ոչ լիարժեք մասնակցության հիմնական պատճառները:
- Վերլուծել կանանց հիմնախնդիրներին վերաբերող փիլիսոփայական հիմքերը, որոնք առաջնային նշանակություն ունեն երկրների զարգացման գործում կանանց մասնակցության անհրաժեշտության ընկալման և դրա ապահովման ուղիների ճշգրտման համար:
- Քննարկել կանանց իրավունքների պահպանմանն ու հասարակական զարգացման գործընթացին նրանց ներգրավմանն ուղղված՝ այդ երկրների իշխանությունների օրենսդրական քաղաքականությունն ու ձեռնարկած միջոցառումները:

• Լուսաբանել Արևմտյան մտքի ազդեցությունն այդ երկրներում կանանց իրավունքների ապահովման ուղղությամբ իրականացվող քաղաքականության վրա:

• Բացահայտել այդ երկրների զարգացման գործում տնտեսական, քաղաքական, մշակութային և այլ բնագավառներում կանանց մասնակցության կարևորությունը:

Ատենախոսության ժամանակագրական սահմանները: Ժամանակագրական առումով ատենախոսությունը ընդգրկում է ՊԾԱԵՀԽ անկախ պետությունների ձևավորման պահից մինչև մեր օրերը, այն ժամանակահատվածը, երբ զարգացման ուղի ոտք դրած այդ պետությունների համար արդիական դարձան կանանց նկատմամբ խտրականության վերացման, նրանց իրավահավասարության ապահովման և երկրների տարբեր բնագավառներում նրանց ներուժի օգտագործման հրատապ լուծում պահանջող խնդիրները, Արևմուտքի հետ քաղաքական հարաբերությունների համատեքստում կանանց հիմնահարցերը դարձան օրակարգային քննարկման թեմա:

Աշխատանքի գիտական նորույթը: Թեև իսլամական աշխարհում, մասնավորաբար, Պարսից ծոցի արաբական երկրներում կանանց իրավունքներին առնչվող առանձին հարցեր քննարկվել են տարբեր հետազոտողների կողմից, սակայն այդ հիմնախնդիրը առ այսօր չեն դարձել ամբողջական և համալիր գիտական ուսումնասիրության առարկա:

Սույն աշխատանքն իր բովանդակությամբ և հարցադրումներով առաջին ուսումնասիրությունն է, որտեղ փորձ է արվում ընդարձակ փաստագրական և վիճակագրական նյութի, ինչպես նաև տարալեզու սկզբնաղբյուրների և ուսումնասիրությունների լայն օգտագործմամբ համակողմանիորեն լուսաբանել Ծոցի համագործակցության երկրներում այս կարևորագույն հիմնախնդրի տարբեր ասպեկտները:

Աշխատանքի կիրառական նշանակությունը: Ատենախոսության մեջ առաջ քաշված դրույթներն ու եզրահանգումները կարող են օգտակար լինել ոչ միայն այդ երկրներում կանաց կարգավիճակի, այլև, ընդհանրապես, կանանց հիմնախնդրի ընկալման ու գնահատման համար: Այն նաև թույլ կտա ավելի հստակորեն պատկերացնել ՊԾԵԱՀԽ-ում առկա դժվարությունները, դրանք պայմանավորող հիմնական գործոնները, այդ երկրների զարգացման արդի մակարդակն ու հեռանկարները:

Աշխատության եզրահանգումները կարող են օգտագործվել նաև այդ երկրների պատմությանն ու նրա ներքին ու արտաքին քաղաքականությանը նվիրված դասընթացներում և ուսումնասիրություններում:

Օգտագործված գրականության համառոտ տեսություն: Պարսից ծոցի համագործակցության խորհրդի անդամ երկրներում կանանց իրա-

վահավասարության, տարբեր բնագավառներում նրանց մասնակցության և, ընդհանրապես, նրանց կարգավիճակի լուսաբանմանը մեծ չափով նպաստել են փաստագրական և վիճակագրական նյութերը, որոնք լիարժեք պատկերացում են տալիս այդ խնդիրների մասին:

Այս տեսակետից մեզ համար առավել կարևոր են եղել մարդու իրավունքներին վերաբերող միջազգային փաստաթղթերը, իսլամական աշխարհում կանանց իրավունքների մասին ընդունված պաշտոնական որոշումները, միջազգային և տարածաշրջանային համաժողովների ընդունած հռչակագրերն ու որոշումները, այդ երկրների օրենսդրական ակտերը[1]: Ատենախոսությունում առաջ քաշված խնդիրները քննարկելիս օգտագործվել են նաև հասարակության զարգացման փիլիսոփայական տեսություններն ու դրույթները:

Աշխատանքը շարադրելիս օգտագործվել է նաև Արևմտյան և Արևելյան, մասնավորաբար, արաբական լուսավորիչների՝ հասարակության մեջ կանանց դերի, նրանց իրավունքների և, ընդհանրապես, նրանց կարգավիճակի մասին արտահայտած գաղափարներն ու տեսակետները, էվոլյուցիայի ընթացքում նրանց մեջ կատարված փոփոխությունների հաշվառմամբ:

Իսլամական աշխարհում կանանց հիմնախնդիրները քննարկելիս լայնորեն օգտագործվել է նաև Սալահի Ամիրիի, Զիբայի Նեժադի, Սադեր Հոսեյնիի, Համիդ Շահիդյանի ուսումնասիրությունները, որոնցում հիմնավորվում է հասարակության մեջ կանանց դերի կարևորությունը և նրանց իրավունքների պահպանման ու ընդլայնման անհրաժեշտությունը: Համիդ Շահիդյանը, մասնավորաբար, Իրանի օրինակով ոչ միայն ներկայացնում է իսլամական աշխարհում կանանց կարգավիճակը, այլև իրենց իրավունքների համար կանանց պայքարը և այդ պայքարի ձեռքբերումները:

Կարևոր են եղել հատկապես կանանց հիմնախնդրի վերաբերյալ Արևմտյան և Արևելյան փիլիսոփայական տեսություններում առկա ընդհանրությունները, որոնք միանշանակորեն հանգում են կանանց նկատմամբ խտրականության վերացմանն ու նրանց՝ տղամարդկանց հետ հավասար իրավունքների տրամադրման անհրաժեշտությանը:

---

[1] Universal Declaration of Human Rights 1948, Декларация о ликвидации дискриминации в отношении женщин 1967, The Cairo Declaration of Human Rights in Islam, 1990, Կանանց հիմնախնդիրներին նվիրված միջազգային կոնֆերանսների որոշումներ, Մեխիկո 1975 թ., Կոպենհագեն 1980 թ., Նայրոբի 1985 թ. և Պեկին 1995 թ.: World Bank, UNIFEM-ի տարբեր տարիներին հրատարակած վիճակագրական տվյալներ, Սաուդյան Արաբիայի Թագավորության, Արաբական Միացյալ Էմիրությունների, Բահրեյնի Թագավորության, Օմանի Սուլթանության, Քուվեյթի և Կատարի սահմանադրություններն ու նրանց մեջ կատարված փոփոխությունները (UNDP-POGAR: Programme on Governance in the Arab Region):

Արևմուտքի և Արևելքի՝ միանգամայն տարբեր հասարակություններում կանանց իրավունքների հարցի ուսումնասիրությունը, ինչպես նաև իսլամում կանանց իրավունքների վերաբերյալ մուսուլմանական լուսավորիչների, իսլամի օրենսգետների և արևմտյան առանձին հեղինակների տեսակետները հնարավորություն են տվել հեղինակին քննարկել բավական լայն տարածում գտած այն տեսակետը, համաձայն որի՝ Արևելքի կանանց իրավունքների սահմանափակությունն արդեն իսկ պայմանավորված է իսլամի դրույթներով: Այս հարցում հեղինակի համար հատկապես արժեքավոր և օգտակար են եղել իմամ Խոմեյնու՝ իսլամում կնոջ իրավունքների մասին շարիաթի համապատասխան դրույթների մեկնաբանություններն ու սեփական տեսակետները, պրոֆ. Մոհամմադ Խամենեիի, Մաֆիզուլ Իսլամի, ինչպես նաև արևմտյան հետազոտողներ Գուստավ Լոբոյի և Ջոն Էսպոզիտոյի կարծիքները:

Արաբական երկրներում տնտեսական, քաղաքական կյանքի բոլոր բնագավառներում կանանց մասնակցության ներկա վիճակի և հասարակությունների զարգացման մեջ նրա դերի կարևորությանն է նվիրված Համաշխարհային բանկի հրատարակած հարուստ վիճակագրական տվյալներով հագեցած ժողովածուն[2], ինչպես նաև նրա այլ հրապարակումները, որոնց նյութերը բացի կարևոր տեղեկություններ տրամադրելուց, նաև մեզ հնարավորություն են տվել հետևել ՊԾԱԵՀԽ երկրներում գենդերային խնդրի զարգացման էվոլյուցիային և նրա մեջ կատարված ակնհայտ փոփոխություններին:

Արևելքի և, մասնավորաբար, ՊԾԱԵՀԽ անդամ երկրների զարգացման գործում կանանց դերի կարևորությունը, տարբեր բնագավառներում կանանց մասնակցության ընդլայնմանն ուղղված քաղաքականությունը, ինչպես նաև նրա վրա արտաքին գործոնների ազդեցությունն ու ձեռքբերումները համակողմանիորեն արծարծվում են մի շարք ուշագրավ ուսումնասիրություններում:

ՊԾԱԵՀԽ-ի անդամ երկրներում կանանց իրավունքների, երկրների կյանքի տարբեր բնագավառներում նրանց ներգրավվածության հնարավորությունների և մակարդակի, երկրների զարգացման համատեքստում նրանցում կատարված էական դրական փոփոխությունների և դրա հեռանկարների, ինչպես նաև կանանց իրավունքների դեռևս պահպանվող սահմանափակության և խտրականության առանձին դրսևորումների մասին համապատասխան տեղեկություններ են տրամադրում Ղ. Աքրամը, Քյաֆաշփուրը, Դ. Հալդը, Ք. Թոբին, Լ. Զիմզը, Ն. Չամլուն և այլք:

---

[2] MENA Development Report, Gender and Development in the Middle East and North Africa, Women in the Public Sphere, Washington, 2004.

Առավելապես այդ երկրներում կանանց իրավունքների և հնարավորությունների ընդլայնմանն ու նրանց ներգրավմանը խոչընդոտող հանգամանքներին են անդրադառնում նաև Է. Ֆրոմը, Ալաղեբանդը, Լ. Խոյին, Զ. Ֆառը, Քեմալին, Վ. Քերեֆթը:

Անհրաժեշտ է նշել, որ վերը նշված հեղինակները միաժամանակ ներկայացնում են այս կարևոր խնդրի վերջնական լուծման հնարավորությունների իրենց ընկալումները, ինչն, անտարակույս, այդ խնդիրները քննարկելիս մեզ համար ունեցել է կարևոր և որոշակիորեն ուղղորդող նշանակություն:

Ատենախոսությունը շարադրելիս մեզ համար օգտակար են եղել նաև հայ գիտնականներ Ն. Հովհաննիսյանի, Ե. Նաջարյանի, Ա. Փաշայանի, Ռ. Մարգարյանի ուսումնասիրությունները[3]:

Ատենախոսության կառուցվածքն ու բովանդակությունը:

Ատենախոսությունը բաղկացած է առաջաբանից, երեք գլուխներից, եզրակացություններից, օգտագործված աղբյուրների և գրականության ցանկից:

Առաջաբանի մեջ հիմնավորվում է թեմայի արդիականությունը, ներկայացվում են աշխատանքի հիմնական նպատակներն ու դրույթները, գիտական նորույթը, թեմայի ժամանակագրական սահմանները, տրվում է օգտագործված գրականության համառոտ տեսությունը:

Առաջին գլուխը՝ «ՊԾԱԵՀԽ երկրների հասարակություններում կանանց դերի պատմական ընկալման առանձնահատկությունները և դրանք պայմանավորող հանգամանքները», անդրադառնում է խորհրդի անդամ երկրների պատմական և քաղաքական զարգացման ընթացքին: Քննարկվում են նաև հասարակական զարգացման փիլիսոփայական հիմունքները, ինչպես նաև ՊԾԵԱՀԽ երկրների զարգացման գործընթացին կանանց մասնակցությունն ապահովող, ինչպես նաև դրանք խոչընդոտող գործոնները:

Գլխի առաջին ենթաբաժինը՝ «Պարսից ծոցի արաբական երկրների համագործակցության խորհուրդը (ՊԾԱԵՀԽ)», նվիրված է ՊԾԱԵՀԽ ստեղծման հանգամանքներին և գործունեության հիմնական նպատակներին: ՊԾԱԵՀԽ կազմի մեջ են մտնում Պարսից ծոցի Արաբական թերակղզու վեց երկրները՝ Բահրեյնը, Կատարը, Քուվեյթը, Արաբական Միացյալ Էմիրությունները, Օմանը և Սաուդյան Արաբիան:

---

[3] Ն. Հովհաննիսյան, Արաբական երկրների պատմություն, հ. 3, Եր. 2006: Ն. Հովհաննիսյան, Արաբական երկրների պատմություն, հ. 4, Եր. 2007: Ե. Նաջարյան, Արաբական աղգային մշակութային զարթոնքը, Եր. 1988: Ա. Փաշայան, Կանանց հիմնախնդիրներն արդի իսլամական աշխարհում, www.noravank.am; Р. Маркарян, Зона персидского Залива, М., 1983.

Խորհրդի ստեղծման գաղափարը առաջ էր քաշվել դեռևս 1975 թ. Քուվեյթի կողմից, որին հաջորդել էին Ծոցի երկրների՝ դրա իրականացմանն ուղղված տարբեր առաջարկները: Սակայն, որքան էլ այդպիսի կառույցի ստեղծումը տարածաշրջանում ձևավորված քաղաքական որոշակի իրադրության պարագայում հրատապ էր, այնուամենայնիվ, առաջարկված նախագծերից և ոչ մեկը հաջողություն չունեցավ, քանի որ նրանցից յուրաքանչյուրի նպատակը նախ և առաջ կառույցում իր ղեկավար դերի ապահովումն էր, իսկ այդ պահին տարածաշրջանի երկրների փոխհարաբերությունների բնույթն ամենևին էլ չէր նպաստում փոխհամաձայնության ձեռքբերմանը:

Սակայն արդեն 1980 թ. վերջին և 1981 թ. սկզբին այն պատճառները, որոնք մինչ այդ խոչընդոտում էին Պարսից ծոցի երկրների համագործակցությունը, տարբեր հանգամանքների բերումով հիմնականում վերացել էին: Շահական Իրանն այլևս գոյություն չուներ և, բնականաբար, չէր կարող արաբական երկրների միավորման համար արգելող գործոն հանդիսանալ: Իրանի Իսլամական Հանրապետության չափազանց բարդ ներքաղաքական վիճակը և Իրաք-իրանյան պատերազմը թուլացրել էին տարածաշրջանում ղեկավար դիրք զբաղեցնելու համար նրանց միջև մրցակցությունը: 1980 թ. սկզբին տարածաշրջանում ստեղծված որոշակի իրադրությունը կրկին անհրաժեշտ և արդիական դարձրեց արաբական երկրների միասնական խորհրդի ստեղծման հարցը, ինչի նախաձեռնողը դարձյալ Քուվեյթն էր:

Փոխադարձ համաձայնությամբ՝ 1981 թ. փետրվարից մինչև ապրիլ ընկած ժամանակահատվածում հաստատվեցին Խորհրդի կառուցվածքը, գործունեության ոլորտը, շրջանակները և ֆունկցիաները: Խորհրդի վերջնական ձևավորումն ավարտվեց 1981 թ. մայիսի 25-ին:

ՊԾԱՀԽ անդամ երկրներում կանանց մասնակցության և, ընդհանրապես, նրանց կարգավիճակի հետ կապված խնդիրների ընկալման և ճիշտ գնահատման նպատակով, ներկայացվել են անհրաժեշտ տեղեկություններ նրանց պատմական զարգացման ընթացքի, տնտեսական, քաղաքական, մշակութային բնագավառների առանձնահատկությունների մասին:

Գլխի երկրորդ ենթաբաժնում՝ «Զարգացում հասկացության փիլիսոփայական ըմբռնումը սեռերի տարբերության դիսկուրսի համատեքստում», վերլուծության են ենթարկվում զարգացման փիլիսոփայական տեսությունները, առանձնացվում են այն գործոնները, որոնք իրենց ամբողջության մեջ տևականորեն սահմանափակել են Պարսից ծոցի համագործակցության անդամ երկրներում կանանց

իրավունքները, խոչընդոտել վերջիններիս ինքնադրսևորման և իրենց երկրների զարգացման գործում ներդրում ունենալու հնարավորությունը:

Երկրների քաղաքական, տնտեսական, մշակութային և այլ բնագավառներում կանանց մասնակցությունը խոչընդոտող գործոնները դասակարգել ենք երկու հիմնական խմբի. 1) այդ երկրների պատմական զարգացման առանձնահատկությունները, 2) այդ երկրներում ժամանակի ընթացքում, նաև օտար ազդեցությամբ ձևավորված մշակութային կառուց-վածքը, որոշակի ավանդույթներն ու սովորությունները, հասարակության մեջ կնոջ տեղի ու դերի յուրովի ընկալումը:

Ենթաբաժնում, միաժամանակ, բնորոշվում են այդ երկրների հասարակական տարբեր բնագավառներում կանանց ներգրավմանը նպաստող այնպիսի գաղափարական և քաղաքական ուղղություններ, հոսանքներ ու աշխարհայացքային համակարգեր, ինչպիսիք են՝ մոդեռնիզմը, հումանիզմը և անհատապաշտությունը, ֆեմինիզմը: Ներկայացվում են նաև արաբական աշխարհում այս գաղափարա-խոսությունների ձևավորման հանգամանքները, նրանց առանձնահատ-կությունները, հետապնդած նպատակներն ու ձեռքբերումները:

Ենթաբաժնում նաև քննարկվում են սեռերի՝ որպես մարդկային տեսակների, հասարակության մեջ նրանց տեղի ու դերի փիլիսոփայական ընկալումները՝ սկսած հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը: Առանձնակի նշանակություն է տրվում հատկապես կնոջ կարգավիճակի մասին Արևմտյան լուսավորիչների տեսակետներին և նրանց էվոլյուցիային: Հատկապես կարևոր նշանակություն են ունեցել արաբական Վերածննդի՝ Նահդայի, ձևաորման, այն պայմանավորող հանգամանքների, արաբ լուսավորիչների գաղափարների և այդ համակարգում կանանց դերի ընկալումը նրանց կողմից:

Ներկայացնելով խնդրի վերաբերյալ Արևմտյան փիլիսոփաների մոտեցումների համառոտ վերլուծությունը՝ մեր նպատակն է եղել հաս-տատել այն իրողությունը, որ կնոջ ու տղամարդու էության, ունակություն-ների ու հնարավորությունների ոչ համարժեք ընկալումը և դրանից բխող իրավունքների անհավասարությունը բնորոշ չէ միայն Արևելքին, ինչպես երբեմն փորձ է արվում ներկայացնել, և դա համամարդկային երևույթ է:

Այլ բան է, որ Արևելքի երկրների պատմական զարգացման առանձնահատկությունները, ավանդույթները, սովորությունները և այլ հանգամանքներ այս իրողությունը դարձրել են առավել ակնբախ և այսօր էլ տարածաշրջանի պետությունների զարգացման ընթացքն ապահովելու համար առաջնահերթ խնդիր:

Ենթագլխում անդրադարձել ենք նաև արաբ փիլիսոփաներ Իբն Ռուշդիի և Իբն Արաբիի ուսմունքներին: Ընդունելով, որ կինը հասարա-

կության մեջ անհամեմատ ցածր կարգավիճակ ունի, քան տղամարդը, Իբն Ռուշդին ոչ միայն չի փորձում այդ հանգամանքը բացատրել կնոջ մտավոր անկատարությամբ, այլև իրատեսորեն ներկայացնում է այդ իրողության՝ հասարակության մեջ ձևավորված օբյեկտիվ պատճառներով, Արևելքի հասարակության կենսակերպով ու կենսափիլիսոփայությամբ, որոնք կնոջ ինքնադրսևորումն անհնարին են դարձրել:

Պատահական չէ, որ արաբական փիլիսոփայության մեջ հասարակական կյանքում կանանց դերի ընկալումն ունեցավ իր էվոլյուցիան: Արաբական Զարթոնքի շատ ներկայացուցիչներ, որոնցից էր նաև արաբ հայտնի լուսավորիչ Սելիմ ալ-Բուսթանին, ուղղակի այն տեսակետն է հայտնում, որ կնոջ էմանսիպացումը պետք է դիտել որպես ազգի առաջընթացի կարևոր պայման:

Տղամարդակենտրոն փիլիսոփայությունն ավելի ուշ ֆեմինիստական փիլիսոփայության ձևավորման պատճառ դարձավ:

Գլխի երրորդ ենթաբաժնում՝ «Ավանդականի և նորի հակադրությունն ու նրա թողած ազդեցությունը կանանց զբաղվածության հիմնախնդրի վրա», անդրադառնում է ավանդականից նորին անցման շրջանում արաբական երկրների առջև ծագած կարևոր խնդիրներից մեկին՝ հասարակության մեջ կանանց մասնակցության դերի ու նշանակության ճշգրտմանը: Ներկայացվում են այս հարցում արաբ հայտնի մտավորականների, փիլիսոփաների, աստվածաբանների մոտեցումները:

Խնդրի ուսումնասիրությունը հնարավորություն է տվել առանձնացնել այն կարևոր նախադրյալները, որոնց ապահովման դեպքում միայն հնարավոր կլինի արաբական երկրներում կանանց վիճակի կարգավորումը և հասարակական կյանքի տարբեր բնագավառներում նրանց ներգրավումը:

Չորրորդ ենթաբաժնում՝ «Հասարակական /սուբյեկտիվ/ սովորույթների դերը ՊԾԱԵՀԽ-ի անդամ երկրներում զարգացման գործընթացին կանանց մասնակցության հիմնախնդրում», հանգամանորեն քննարկվում են արաբական աշխարհում տիրող ավանդույթներն ու սովորությունները և աղջիկների ու տղաների դաստիարակության մեջ արմատավորված միանգամայն հակադիր արժեքային կատեգորիաները:

Մասնավորաբար, եթե արդեն վաղ տարիքից տղաներին դաստիրակում էին այն ոգով, որ հասարակական և քաղաքական ասպարեզում ակտիվ գործունեությունը միայն իրենց է վերապահված, ապա աղջիկներին ներշնչվում էր, որ իրենք միայն կարող են ինքնադրսևորվել որպես տնային տնտեսուհի և երեխաների դաստիարակ: Այսպիսի կարծրատիպերի առկայությունը, բնականաբար, իգական սեռի ներկայացուցիչների մոտ ձևավորում էր թերարժեքության բարդույթ, և

նրանք չէին համարձակվում մտածել երբևէ հասարակական-քաղաքական կյանքի մեջ ներգրավվելու մասին:

Արևմտյան ուսումնասիրողների մոտ հիմնականում տարածված է այն թյուր կարծիքը, որ Արևելքի կնոջ իրավունքների սահմանափակությունը մեծ չափով բխում է կրոնից՝ իսլամի պահպանողական դոգմաներից: Այս կարծիքը, սակայն, կտրականապես հերքվել և այսօր էլ հերքվում է իսլամագետների և իսլամական հայտնի օրենսգետների կողմից:

Երկրորդ գլուխը՝ «ՊԾԱԵՀԽ երկրներում կանանց մասնակցության ընդլայնման ուղղությամբ իրականացվող քաղաքականությունը», նվիրված է անդամ երկրներում կանանց զբաղվածության ընդլայնման և զարգացման գործընթացին նրանց մասնակցության նախադրյալներին, վերլուծության են ենթարկվում այդ երկրներում կանանց կրթության հնարավորությունները և այդ ուղղությամբ իշխանությունների քաղաքականությունը, ինչպես նաև կանանց առողջապահության բնագավառում առկա մակարդակը և այն ապահովող գործոնները:

Երկրորդ գլխի առաջին՝ «ՊԾԱԵՀԽ անդամ երկրներում կանանց զբաղվածության ընդլանման և զարգացման գործընթացին նրանց մասնակցության ապահովման նախադրյալները» ենթաբաժնում, հաշվի առնելով անդամ երկրների սոցիալ-տնտեսական, քաղաքական իրադրությունը և նրա առանձնահատկությունները՝ առանձնացվում են այն գործոնները, որոնց ապահովումը կարող է իրական նախադրյալ հանդիսանալ այդ երկրներում կանանց զբաղվածության ընդլայնման համար:

Այդպիսի նախադրյալներ են դիտվում սեռերի իրավահավասարությունը, կանանց կողմից բարձր պաշտոններ զբաղեցնելու հնարավորությունը խոչընդոտող հանգամանքների վերացումը, տարբեր բնագավառներում կանանց աշխատավարձի բարձրացումը, նրանց նկատմամբ բիրտ ուժի գործադրման բացառման երաշխիքները, մայրական ու հասարակական դերերը միաժամանակ և բարձր մակարդակով իրագործելու՝ օրենքի ուժ ունեցող հնարավորությունների ստեղծումը, և, վերջապես, կանանց աշխատուժի օգտակարության բարձրացումը՝ վերջիններիս ունակությունների և գիտելիքների կատարելագործման միջոցով:

Ենթաբաժնում, միաժամանակ, ներկայացվում են համապատասխան վիճակագրական տվյալներ և աղյուսակներ, որոնք հնարավորություն են տալիս հետևել և այդ նախադրյալների ստեղծման դինամիկային և ենթադրել մոտ ապագայում նշված երկրների իշխանությունների կողմից այդ ուղղությամբ ձեռնարկվող միջոցառումների արդյունքները:

Ուրվագծվում են նաև այն առկա և հնարավոր գործոնները, որոնց վերացման համար պահանջում է նաև միջազգային շահագրգիռ կազմակերպությունների և ատյանների միջամտությունը:

Երկրորդ գլխի երկրորդ ենթաբաժինը՝ «Կանանց կրթության վիճակի բարելավմանն ուղղված ծրագրերի մշակումը», նվիրված է այդ երկրներում կրթության և, հատկապես, կանանց կրթության վիճակին, այդ բնագավառում իշխանությունների քաղաքականությանը, իրականացված միջոցառումներին և դրանց արդյունքների քննարկմանը:

ՊԾԱԵՀԽ անդամ արաբական երկրներում կանանց կրթության հնարավորությունների և այդ ասպարեզում էական ձեռքբերումների հարցը քննարկվում է այդ երկրների զարգացման ընթացքի, պետական համակարգի առանձնահատկությունների հաշվառմամբ, տարբեր բնագավառներում իրականացվող բարեփոխումների և կանանց նկատմամբ խտրականության վերացմանն ուղղված քաղաքականության ու համապատասխան գործնական նախաձեռնությունների համատեքստում:

Համաձայն վիճակագրական տվյալների՝ ՊԾԱԵՀԽ անդամ գրեթե բոլոր երկրներում, սկսած 1970-ականների սկզբից, աստիճանաբար նվազեց կանանց անգրագիտության մակարդակը: Ուշագրավ է, որ կրթության համակարգում՝ տարրական, միջնակարգ դպրոցներում և, հատկապես, բարձրագույն ուսումնական հաստատություններում, 1980-2000 թթ. իգական սեռի ներկայացուցիչների թիվը ՊԾԱԵՀԽ անդամ գրեթե բոլոր երկրներում գերազանցել է արական սեռի ներկայացուցիչների թվին, ինչը վկայում են պաշտոնական վիճակագրական տվյալները: Ի դեպ, այդ թիվը նշված ժամանակահատվածում պարբերաբար աճել է:

Երկրորդ գլխի երրորդ ենթաբաժինը՝ «Կանանց առողջապահության բնագավառում ձեռնարկված միջոցառումները», վերաբերում է կանանց առողջական մակարդակին և այն ապահովող գործոնների վերլուծությանը: ՊԾԱԵՀԽ անդամ երկրների զարգացման գործընթացը, բնականաբար, դրական փոփոխություններ մտցրեց նաև այդ երկրների առողջապահության համակարգում, ինչը մեծապես նպաստեց ազգաբնակչության և, մասնավորաբար, կանանց առողջական վիճակի բարելավմանն ու կյանքի տևողության երկարացմանը:

Ընդհանուր առմամբ՝ կյանքի որակի փոփոխությանը զուգընթաց կյանքի նկատմամբ հույսի և վստահության ցուցանիշների աճը հիմնականում պայմանավորված է ծննդաբերող մայրերի և նորածինների մահացության նվազմամբ, ինչն էլ իր հերթին՝ բժշկական բանիմաց և հմուտ անձնակազմի առկայությամբ: Վիճակագրական տվյալները վկայում են, որ նորածինների և մանուկների մահացության աստիճանն ավելի ցածր է այն երկրներում, որոնք կանանց նկատմամբ խտրականության սահմանափակման, և, մանավանդ, կանանց կրթական մակարդակի բարձրացման բնագավառում էական ձեռքբերումներ են արձանագրել:

Ուսումնական տարբեր հաստատություններում սովորող աղջիկները սովորաբար ամուսնանում են ուսումնառությունն ավարտելուց հետո միայն, ինչը վաղ տարիքում ամուսնացած, ընտանիքի հոգսի մեծ մասն իրենց վրա վերցրած և տարրական ազատություններից զուրկ կանանց համեմատ այսօր այդ հասարակություններում նրանց տալիս է առավելություն, ավելի բարձր կարգավիճակ: Այս նույն իրողությունները, սակայն, միաժամանակ պատճառ են դարձել այդ երկրներում ծնելիության որոշակի նվազման: Հայտնի է, որ կրթված կինն ավելի ուշ է ամուսնանում և առավել գրագետ է վերաբերվում ոչ ցանկալի հղիությունների կանխարգելմանն ու իր առողջության պահպանմանը, իր և ընտանիքի անդամների առողջական խնդիրները փորձում է լուծել ոչ թե հասարակության մեջ լայնորեն տարածված ավանդական միջոցներով, այլ, հիմնականում, դիմում է մասնագետների օգնությանը: Բացի այդ, կրթված կանանց մեծ մասը ձգտում է տեղավորվել աշխատանքի, ինչը ևս սահմանափակում է շատ երեխաներ ծնելու հնարավորությունը:

Ստեղծված վիճակը կարգավորելու ուղղությամբ հատկապես լայն աշխատանքներ են տարվում Բահրեյնում, Կատարում, ԱՄԷ-ում և Քուվեյթում, որոնց արդյունքներն ակնհայտ են:

Երրորդ գլուխը՝ «Կանանց արդի վիճակը ՊԾԱԵՀԽ երկրներում: Կանանց մասնակցության հարցում ձեռք բերված արդյունքները և դրանք ապահովող ներքին և արտաքին գործոնները», անդրադառնում ենք ՊԾԵԱՀԽ երկրների ներքին կյանքի տարբեր բնագավառներում և, հատկապես, տնտեսության ոլորտում կանանց ներգրավվածության խնդրին, ինչպես նաև կանանց քաղաքական դերին ու կարգավիճակին: Քննարկվում է ժամանակակից մոդեռնիզմի ազդեցությունն այդ երկրներում կանանց իրավունքների և, ընդհանրապես, գենդերային հավասարության ապահովման վրա: Կանանց վիճակի և նրանց խնդիրների ճշգրտման նպատակով ներկայացվում են նաև Բահրեյնի կանանց շրջանում մեր կողմից անցկացված հարցման տվյալները:

Երրորդ գլխի առաջին ենթաբաժնում՝ «Կանանց աշխատուժի զբաղվածության մակարդակը, աճի տեմպերը և դրանց նշանակությունը ՊԾԱԵՀԽ-ի անդամ երկրների զարգացման գործում», քննարկվում են անդամ երկրների տնտեսության մեջ կանանց ներգրավման մակարդակը, նրա աճի տեմպերի արագացմանը նպաստող և, միաժամանակ, դրանք սահմանափակող գործոնները:

Հետազոտությունները ցույց են տվել, որ վերոհիշյալ երկրներում կանանց աշխատուժի օգտագործումը սկսվել է բավականին ցածր ցուցանիշներից: Այդ երկրների իշխանությունների կողմից ձեռնարկած միջոցառումների շնորհիվ, սակայն, 1960-ական թթ. մինչև այժմ այն աճել

է 50%-ով: Այսուհանդերձ, դեռևս այդ երկրներում առկա են տնտեսության մեջ կանանց ներգրավումը խոչընդոտող մի շարք հանգամանքներ:

Աշխատանք որոնելու համար կանայք պետք է ունենան իրենց ընտանիքի թույլտվությունը, ինչը ամրագրված է այդ երկրների քաղաքացիական օրենքներում: Մյուս դժվարությունը աշխատատեղերի բաշխման կենտրոնների սուբյեկտիվ վերաբերմունքն է կանանց աշխատանքով ապահովելու հարցում: Վերջիններիս ղեկավարները, մասնավորաբար, ելնելով մի շարք հանգամանքներից, ինչպես՝ ընտանեկան պայմանների հետ կապված նրանց՝ աշխատանքից ավելի հաճախ բացակայելու հավանականությունը, հղիության և նորածիններին խնամելու շրջանում լիարժեք աշխատելու նվազ հնարավորությունները, կնոջ աշխատանքային ունակությունների ոչ լիարժեք ընկալումը և այլն, առանձնապես հակված չեն կանանց հետ համագործակցելու:

Մյուս կողմից՝ կանանց աշխատուժի ընդլայնումը հաճախ խոչընդոտվում է հենց իրենց՝ կանանց պասսիվությամբ, ինչը պայմանավորված է այնպիսի լուրջ գործոններով, ինչպես կնոջ և տղամարդու աշխատաքնի վարձատրության մեջ առկա տարբերությունը, նրանց համար բարձր պաշտոնների և բարձր վարձատրվող աշխատաքնի գրեթե անհասանելիությունը, հասարակության մեջ դեռևս ոչ միայն պահպանվող, այլև հաճախ գերակայող սովորույթները, որոնք ինքնին նվազեցնում են աշխատատեղերի արդար, առանց սեռային խտրականության բաժանումը և այլն:

Ենթաբաժնում ներկայացվում են նաև այն արտոնությունները, որոնք նախատեսված են այդ երկրների օրենքներում: Պարսից ծոցի տնտեսական համագործակցության բոլոր երկրներում իշխանությունները ճանաչում են կանանց իրավահավասարությունն ու ազատությունները՝ դրանց բացակայությունը համարելով ազգային զարգացումը խոչընդոտող անընդունելի պատնեշ, և խրախուսում են կանանց մասնակցությունը հասարակական բոլոր ոլորտներում: Աշխատանքային օրենքները պաշտպանում և արտոնություններ են տալիս կանանց՝ այդ թվում ծննդաբերության, երեխայի խնամքի համար տրվող արձակուրդը, մայրերի թոշակի անցնելու պայմանները և այլն:

Երրորդ գլխի երկրորդ ենթաբաժինը՝ «Կանանց քաղաքական մասնակցության ընդլայնումը՝ որպես այդ երկրների զարգացման կարևոր գործոն», անդրադառնում է այդ երկրներում կանանց քաղաքական դերին ու կարգավիճակին առընչվող հարցերին: Այս խնդիրներն անմիջապես կապված են կանանց իրավունքների, այդ իրավունքների սահմանների և գործնականում նրանց կիրառման հետ: Այս խնդիրները վերոհիշյալ երկրներում ունեն բարդություններ:

Ընդհանրապես, որոշ ժամանակ առաջ այս երկրների սահմանադրությամբ նույնիսկ քաղաքացիական նվազագույն իրավունքը, այն է՝ մասնակցությունը ընտրություններին, կանանց համար նախատեսված չէր: Կանայք թույլ են ներկայացված նաև քաղաքական կյանքում և հասարակական որոշումների կայացման բոլոր մակարդակներում: Այսպիսով, չնայած այդ երկրներում սահմանադրությամբ ու մյուս օրենքներով կանայք հավասար քաղաքացիներ և օրինական ձայն տվողներ են համարվում, այնուամենայնիվ, կանանց ներգրավվածությունը քաղաքականության և իշխանության մեջ աննշան է:

Նման վիճակի պատճառներից մեկն, անշուշտ, այն է, որ այս երկրներից շատերում տասնամյակներ շարունակ ընդհանրապես չէին ընդունում կանանց ձայնի իրավունքը, այն դեպքում, երբ Պարսից ծոցի համագործակցության երկրներից 4-ը՝ Սաուդյան Արաբիան, ԱՄԷ-ը, Քուվեյթ-ը, Կատար-ը, մինչև վերջերս կանանց այդ իրավունքը չէին շնորհել և գտնվում էին համաշխարհային հասարակության ճնշման տակ, որը նրանց ղեկավարներից պահանջում էր քաղաքական բարեփոխումների անհապաղ իրականացում: Այդ ճնշումների հետևանքով 2005 թ. հիշյալ երկրներում կանանց քաղաքական մասնակցության մեջ որոշակի տեղաշարժեր են նկատվում: Այժմ էլ այս տարածաշրջանում կին պատգամավորներ ունեցող երկրների թիվն աստիճանաբար ավելանում է: Այս գործընթացը ներառվել է հազարամյակի զարգացման նպատակների ձեռքբերման համար նախատեսվող աշխատանքների մեջ՝ նպատակ ունենալով ՊԾԱԵՀԽ երկրներում մինչև 2010թ. կանանց համար ապահովել պատգամավորական տեղերի ավելի քան 30%-ի տրամադրումը: ՊԾԱԵՀԽ երկրների համար, որոնցից մի քանիսում մինչև այժմ խորհրդարանն անգամ մեկ կին ներկայացուցիչ չունի, այս համեմատաբար բարձր ցուցանիշին հասնելը, թերևս, ռեալ չէ: Այսուհանդերձ, այս բնագավառում և, ընդհանրապես, հասարակական կյանքում կանանց քանակական հարաբերակցության մեծացման համար այս երկրներում առկա են իրավական հնարավորություններ: Առավել արդյունավետ միջամտությունը քվոտաների նշանակումն է, ինչի միջոցով քաղաքական կուսակցություններում, ինչպես նաև տեղական ու ազգային ժողովներում կանանց համար տեղերի որոշակի թիվ է վերապահվում:

Այս միտումը ավելի քան նկատելի է նաև Պարսից ծոցի համագործակցության երկրներում, որի արտահայտություններից է պետական և քաղաքական ոլորտներ կանանց ներգրավման ուղղությամբ միջոցառումների ձեռնարկումը: Ներկայացվել է այս տեսակետից Ծոցի արաբական յուրաքանչյուր երկրում տիրող վիճակը:

Երրորդ գլխի երրորդ ենթաբաժնում՝ «Ժամանակակից մոդեռնիզմի դերը ՊԾԱԵՀԽ երկրներում կանանց ներգրավվածության համար բարենպաստ պայմանների ու հեռանկարների ստեղծման գործում», քննարկվում են զարգացման ժամանակակից փուլում Արևմուտքից այդ երկրներ մոդեռնիզմի ներթափանցման նախադրյալները, իրականացման ձևերը, դրա առաջ բերած փոփոխությունները և արդյունքները: Հանգամանորեն անդրադարձել ենք տարածաշրջանի ինտենսիվ գլոբալացման խնդրին, քանի որ հատկապես վերջինս, որոշակիորեն նպաստելով այդ երկրների առաջադիմությանը, միաժամանակ հասարակության որոշ շրջանակների կողմից հանդիպեց լուրջ դիմադրության:

Գլոբալացման գործընթացը կարևոր նշանակություն ունեցավ կանանց իրավունքների ընդլայնման, տնտեսական, քաղաքական, մշակութային բնագավառներում կանանց ավելի լայն մասնակցության ապահովման համար:

Ենթաբաժնում անդրադառնում ենք նաև կանանց հանդեպ խտրականությունների վերացմանը նվիրված կարևորագույն գագաթնաժողովներին, կոնվենցիաներին, բանաձևերին, որոնք նպատակաուղղված են գենդերային հավասարության ապահովմանը, երկրների տարբեր բնագավառներում կանանց ավելի լայն ներգրավմանը և նրանց հնարավորությունների լիարժեք օգտագործմանը: Քննարկվում է նաև ՊԾԱԵՀԽ անդամ երկրներում նույնպիսի նպատակներ հետապնդող կանանց հասարակական կազմակերպությունների աշխատանքը:

Մասնավորաբար Ծոցի համագործակցության անդամ երկրների կանանց կազմակերպությունների ձևավորման հանգամանքների և գործունեության ուսումնասիրությունը թույլ է տալիս մեկ անգամ ևս հաստատել այդ երկրների զարգացման գործում կանանց ակտիվ մասնակցության կարևորությունը, որի արդյունավետությունը մեծապես կախված է ՀԿ-ներիին իշխանությունների աջակցությունից:

Ենթաբաժնում, արձանագրելով գենդերային հավասարության բնագավառում ծոցի երկրների ձեռքբերումները, միաժամանակ փորձել ենք առանձնացնել նաև դեռևս առկա խոչընդոտները: Այս կապակցությամբ հարկ ենք համարել ներկայացնել խնդրի վերաբերյալ ուսումնասիրողների տեսակետները, ինչպես նաև Բահրեյնի կանանց լայն շրջանում մեր անցկացրած հարցման արդյունքները: Այս միջոցով հնարավորություն ենք ունեցել, չնայած ՊԾԵԱՀԽ երկրներում տնտեսական, քաղաքական, մշակութային իրադրության և, համապատասխանաբար, խնդրի վերաբերյալ առկա տարբերություններին, ճշտել այդ երկրներում կանանց մասնակցությունը սահմանափակող գործոնները և հստակեցնել այդ երկրներում կանանց իրավունքներն ու կարգավիճակն ընդհանրապես:

Եզրափակման մեջ, ամփոփելով աշխատանքի հիմնական արդյունքները, հեղինակը հանգել է հետևյալ եզրակացություններին:

- Այսօր երկրների տնտեսական, հասարակական-քաղաքական, մշակութային ոլորտներում կանանց մասնակցությունը չափազանց կարևոր է, և նրանց ունակությունների և կարողությունների ոչ լիարժեք օգտագործելու հանգամանքն ու նրանց գործունեության սահմանափակումը խոչընդոտում է հասարակության զարգացմանը:

- Տարբեր երկրների ու տարածաշրջանների զարգացման անհավասարաչափությունը, նրանց միջև առկա ակնհայտ տարբերությունները ներքին և արտաքին, օբյեկտիվ և սուբյեկտիվ այլ գործոնների հետ միասին մեծապես պայմանավորված են նաև նրանցում կանանց իրավունքների մակարդակով և նրանց կարգավիճակով ընդհանրապես: Երկրների զարգացածության աստիճանը մեծապես որոշվում է կանանց մասնակցության չափով: Այս հիմնական ընդհանրություններով հանդերձ, այնուամենայնիվ, նաև ՊԾԵԱՀԽ երկրներում այս հարցում ևս առկա են տարբերություններ: Մասնավորաբար, տարածաշրջանի այն երկրներում, որտեղ զարգացման գործընթացում ուշադրություն է դարձվել կանանց առանձնահատուկ կարիքներին, պահանջմունքներին, զարգացման գործում նրանց մասնակցությանը, այդ երկրների ձեռքբերումներն առավել ակնառու են:

- Ազգային պետությունների ստեղծումից հետո ՊԾԵԱՀԽ երկրներում կանանց վիճակի բարելավման, տղամարդկանց հետ նրանց իրավահավասարության ապահովման, ինչպես նաև տարբեր բնագավառներում նրանց ներգրավման ուղղությամբ զգալի քայլեր են ձեռնարկվել: Հատկապես կարևոր միջոցառումներ են իրականացվել տնտեսության մեջ կանանց ներգրավման, նրանց կրթական և առողջապահական մակարդակի բարձրացման, իրենց ունակությունների և կարողությունների դրսևորման և, այդպիսով, հասարակության մեջ իրենց լիարժեք քաղաքացի զգալու, ինքնավստահության ձեռքբերման և ինքնահաստատման համար:

- Այսուհանդերձ, այդ երկրներում առկա են նաև կանանց իրավահավասարությունը սահմանափակող և նրանց լիարժեք մասնակցությունը խոչընդոտող լուրջ գործոններ, ինչպես՝ այդ երկրների պատմական զարգացման ընթացքի առանձնահատկությունները, նրանցում տևականորեն պետականության բացակայությունը, այլ պետությունների գերակայության տակ գտնվելը, ինչը պայմանավորել է անկախություն ձեռք բերելու նախօրյակին վերջիններիս հետամնացությունը և դրան համապատասխան՝ կանանց իրավունքների սահմանափակությունն ու կանանց կարգավիճակն ընդհանրապես:

- Կանանց իրավունքները սահմանափակող կարևոր գործոն է նաև այդ երկրների հասարակություններում դեռևս մինչև օրս որոշակիորեն պահպանված ավանդույթներն ու սովորությունները, կնոջ ունակություն-ների նկատմամբ սկեպտիցիզմը, ինչն անմիջապես պայմանավորված է հայրիշխանության տղամարդակենտրոն համոզմունքով:

- Այդ երկրների հետամնացության և այսօր էլ նրանց զարգացման հետ կապված բազմապիսի դժվարությունները պայմանավորված են նաև այդ հասարակություններում ազգային ինքնագիտակցության ձևավորման չափազանց կարևոր, սակայն բարդ և տևական ժամանակ պահանջող ռազմավարության իրականացումը:

- ՊԾԵԱՀԽ երկրները հարկադրված էին սկզբից և եթ իրենց ուշադրությունը սևեռել ազգային ինքնության, նացիոնալիզմի և անհատապաշտության ձևավորման առաջնահերթ և գերակա, միաժամանակ դժվարլուծելի, մեծ ջանքեր և տևական ժամանակ պահանջող խնդիրների վրա՝ ակամա հետին պլան մղելով մի շարք այլ, թեկուզ ոչ պակաս կարևոր հարցեր, այդ թվում նաև կանանց իրավահավասարության հարցը:

- ՊԾԵԱՀԽ երկրների տարբեր բնագավառներում, նաև կանանց մասնակցության բնագավառում նորացման դանդաղ ընթացքը հետևանք էր երկրների ներսում ազգաստեղծման պրոցեսը խոչընդոտող ուժերի՝ իշխանությունից զրկված առանձին ցեղերի, ցեղային ու կրոնական միավորումների ընդդիմադիր գործունեությունը

- Վերջին տասնամյակներում այդ երկրներում կանանց խնդիրների լուծմանը մեծապես նպաստել է նաև նոր կամ ժամանակակից մոդեռնիզմի ներթափանցումը, հատկապես գլոբալացման քաղաքակա-նությունը, որն իրականացվում է ամենատարբեր միջոցներով ու ձևերով, և որն անմիջապես կիրառվում է նաև այս երկրներում: Չնայած դրա առանձին ասպեկտները ոչ միշտ է, որ ընդունվում են հիշյալ երկրների հասարակությունների կողմից, այնուամենայնիվ, ժամանակակից տնտե-սական և մշակութային ձեռբերումների, նորագույն տեխնոլոգիաների լայն ներթափանցումն այդ երկրներ առաջ են բերել նաև արժեհամա-կարգի և մտածելակերպի փոփոխություններ, որոնք հատկապես կանանց իրավունքների ընդարձակման տեսակետից ունեն իրենց արդյունքները:

- Չնայած կանանց հիմնախնդրում էական ձեռքբերումներին՝ ՊԾԵԱՀԽ երկրներում կանանց նկատմամբ իրականացվող քաղաքակա-նությունը և երկրների տնտեսական, հասարակական-քաղաքական կյանքում կանանց մասնակցությունը դեռևս լիովին բավարար չէ:

Ատենախոսության թեմայով հեղինակի հրապարակումները

1. F. Rokni, Naghsh-e-penhan-e zanan dar touse'e-ye keshvarha-ye arabi (պարսկ.) (Կանանց ոչ բացահայտ դերն արաբական երկրների զարգացման հարցում), Մենագրություն, Փարսիա, Թեհրան, 2012, 144 էջ:
2. Ռոքնի Ֆ., Պարսից ծոցի համագործակցության խորհուրդը, Orientalia, ԵՊՀ Արևելագիտության ֆակուլտետի երիտասարդ դասախոսների և ասպիրանտների գիտական հոդվածների ժողովածու, պրակ 9, Եր., 2009, էջ 84-86:
3. Ռոքնի Ֆ., Զարգացման գործընթացներում կանանց գործունեությունը խոչընդոտող գործոնները, «Մխիթար Գոշ», գիտամեթոդական հանդես, հասարակական գիտություններ, 2/22, Հայ-ռուսական միջազգային համալսարան, Եր. 2009, էջ 108-109:
4. Rokni F., Poladian A., Arab women viewpoints with respect to their participation in social development in the society // Journal of Applied Sciences, Asian Network for Scientific Information, 9(7), Pakistan, 2009, pp. 1293-1300
5. Ռոքնի Ֆ., Կանանց կրթական վիճակը Պարսից ծոցի համագործակցության խորհրդի անդամ երկրներում, Orientalia, պրակ 12, Երևան, 2011, էջ 162-167:
6. F. Rokni, Bahrainian Women Viewpoints with Respect to Their Participation in Social Development, Bulletin of the Georgian National Academy of Sciences, 8 (1), Tbilisi, 2014, p. 176-186.
7. F. Rokni, A Study of Labor Law and Women's Employment in the GCC Arab Countries, Annals of the Brazilian Academy of Sciences, 87 (1), Rio de Janeiro, 2015, p. 215-221.
8. Ռոքնի Ֆ., Պարսից ծոցի համագործակցության խորհրդի անդամ արաբական երկրների զարգացման գործում կանանց ներգրավման գծով առկա ձեռքբերումները, Մերձավոր արևելք Պատմություն, քաղաքականություն, մշակույթ XI-XII Խնդիրների ժողովածու, Երևան, 2017, էջ 177-189:

РОКНИ ФАРИБА

УЧАСТИЕ ЖЕНЩИН В РАЗВИТИИ СТРАН-ЧЛЕНОВ СОВЕТА СОТРУДНИЧЕСТВА АРАБСКИХ ГОСУДАРСТВ ПЕРСИДСКОГО ЗАЛИВА (ССАГПЗ)

Диссертация на соискание учёной степени кандидата исторических наук по специальности 07.00.02 - «Всемирная история, международные отношения». Защита состоится 26-го марта, 2018 г., в 13:00, на заседании специализированного совета 006 “Всемирная история, международные отношения”, действующего при Институте востоковедения НАН РА, по адресу: 0019, Ереван, пр. М. Баграмяна, 24/4.

РЕЗЮМЕ

Диссертационная работа посвящена изучению участия женщин в экономической, обшественной и политической жизни стран-членов Совета сотрудничества арабских государств Персидского залива и его важная роль в их развитии.

Всесторонее изучение специфики гендерного вопроса в этих сранах, проблемы равноправия женщин и факторов, препятствующих их деятельности, вызвано необходимостью по возможности полного исследования положения женщин в этих странах, и выявления обусловивших это положение обстоятельств.

Исследование данной темы имеет чрезвычайно важное значение для определения кординальных исторических и философских основ развития этих стран и, соответсвенно, постепенной трансформации обшественного восприятия женского фактора, политики властей и статуса женщин, что обусловило их активное участие в важных для стран процессах.

Тема диссертации не становилась предметом отдельного исследования, хотя ее различные аспекты освещались в арабской, иранской и зарубежной историографии.

По содержанию и структуре данная работа является первым подобным исследованием.

Диссертация состоит из предисловия, трех глав (каждая из которых содержит разделы), заключения, списка использованных первоисточников и научной литературы.

В предисловии обосновывается актуальность и важность темы диссертации, формулируются ее цели и задачи, научная новизна, теоретическое и практическое значение. В предисловии также дается краткий обзор использованных источников и литературы, раскрываются методологические основы исследования.

В первой главе диссертации (“Восприятие исторической роли женщин в обществах стран ССАГПЗ”), представляется процесс исторического и политического развития арабских стран-членов Савета сотрудничества Персидкого залива. Рассматриваются и анализируются философкие основы общественного развития, а также обеспечивающие участие женщин в процессе развития этих стран, как и препятствующие их участию основные факторы.

Вторая глава (“Политика расширения участия женщин в странах ССАГПЗ”), посвещена реальным предпосылкам расширения занятости женщин и их участия в процессе развития. Анализируются возможности оброзования женщин в этих странах и политика властей в этой области, а также уровень здравоохранения женщин, и усилия направленные на его повышение.

Третья глава (“Нынешнее положение женщин в стран ССАГПЗ. Достижения в области участия женшин и обеспечиваюшие их внутренние и внешние факторы”), рассматривается вопрос вовлеченности женщин в разных областях внутренной жизни и, в особенности, экономической сфере этих стран. Исследуется влияние современного модернизма, в частности, глобализационного процесса на обеспечение в этих странах прав женщин и гендерного равноправия вообше. С целью уточнения состаяния и проблем женщин в странах ССАГПЗ представляются данные проведенного нами опроса среди женщин Бахрейна.

В заключении диссертации представлены основные выводы по рассмотренным в работе проблемам.

Благодаря целенаправленной политике властей, расспространению идеологии исламского феминизма и феминстского движения в этих странах, а также влияния внешних процессов, дастигнуты существенные результаты в статусе женщин. В тоже время проблема более широкого участия женщин в экономической, обшественно-политической жизни этих стран все еще остается актуальной.

ROKNI FARIBA

WOMEN'S PARTICIPATION IN DEVELOPMENT OF THE MEMBER COUNTRIES OF COOPERATION COUNCIL FOR THE ARAB STATES OF THE GULF

The defense of dissertation will take place at 13:00, on 26th of March of 2018, at the meeting of the Specialized council 006 "World History, International Relations" at the Institute of Oriental Studies of NAS RA. The dissertation is submitted for the pursuing of the Scientific Degree of the Doctor of Philosophy in the field of "World History, International Relations" 07.00.02.

SUMMARY

The dissertation is devoted to the study of the participation of women in economic, social and political life of the member countries of Cooperation Council for the Arab States of the Gulf and its important role in their upgrowth.

A thorough study of the specifics of the gender issue in these countries, the problems of women's equality and the factors that impede their activities, is caused by the necessity, if possible, of a full study of the situation of women in these countries and the identification of circumstances that have caused this situation.

The study of this topic is of utmost importance for the determination of the fundamental historical and philosophical foundations of the development of these countries and, accordingly, the gradual transformation of the public perceptions of the female factor, the policy of the authorities and the status of women, which led to their active participation in important processes for countries.

The dissertation has not been the subject of a separate study, although its various aspects were covered in the Arab, Iranian and foreign historiography.

According to the content and structure this work is the first such study.

The dissertation consists of introduction, three chapters (each of which is divided into sections), conclusion, list of primary sources and scientific literature.

In the introduction, the urgency and importance of the topic of the dissertation are substantiated, its goals and tasks, scientific novelty, theoretical and practical significance are formulated. The introduction also gives a brief overview of the sources and literature used and the methodological basis of the research is disclosed.

In the first chapter of the dissertation ("Perception of the historical role of women in the societies of the Cooperation Council for the Arab States of the Gulf"), the process of historical and political development of the Arab member countries of the Cooperation Council of the Gulf is presented. The philosophical foundations of social development, as well as ensuring the participation of women in the upgrowth of the mentioned countries, as well as the main factors preventing their participation, are examined and analyzed.

The second chapter ("The Policy of Expanding Women's Participation in the GCC Countries") is devoted to the real prerequisites for the expansion of women's employment and their participation in the development process. The possibilities of women's education in these countries and the policies of the authorities in this area, as well as the level of women's health and efforts to increase it are analyzed.

The third chapter ("Current status of women in the GCC countries: achievements in the field of women's participation and ensuring their internal and external factors") addresses the issue of women's involvement in various areas of domestic life, and especially in the economic sphere of these countries. The influence of up-to-date modernism, in particular, the globalization process, on ensuring the rights of women and gender equality in these countries is studied. In order to clarify the composition and problems of women in the GCC countries, we present the data of our survey among women in Bahrain.

In the conclusion of the dissertation the main conclusions on the problems considered in the work are given.

Thanks to the purposeful policy of the authorities, the spread of the ideology of Islamic feminism and the feminist movement in these countries, as well as the influence of external processes, significant results were achieved in the status of women. At the same time, the problem of the broader participation of women in the economic, public and political life of these countries is still relevant.